ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞ր օկտավաներն են շրջապատում փոքր օկտավան.**

1) մեծ և առաջին օկտավաները
2) մեծ և կոնտր օկտավաները
3) կոնտր և սուբկոնտր օկտավաները
4) առաջին և երկրորդ օկտավաները

2 **Որո՞նք են նոտագրությունը կրճատող և պարզեցնող նշանները.**

1) վոլտա, կոդա
2) տրեմոլո, ռեպրիզա
3) էքսպոզիցիա, ռեպրիզա
4) արպեջատո, ստակկատո

3 **Ինչպե՞ս է կոչվում հնչման աստիճանաբար մեղմացումը երաժշտության մեջ.**

1) դիմինուենդո
2) պիանիսիմո
3) սֆորցանդո
4) կրեշչենդո

4 **Ինտերվալներն ունեն երկու մեծություն.**

1) բացարձակ և հարաբերական
2) հիմնական և լրացուցիչ
3) հիմնական և օժանդակ
4) աստիճանային և տոնային

5 **Ո՞ր շարքում է թվարկված ինտերվալների ճիշտ հաջորդականությունը.**

1) պրիմա, տերցիա, կվարտա
2) կվարտա, սեպտիմա, օկտավա
3) սեկունդա, տերցիա, կվինտա
4) կվինտա, սեքստա, սեպտիմա

6 **Մաժորի և մինորի զույգ տոնայնությունները լինում են.**

1) զուգահեռ, համանուն, էնհարմոնիկ հավասար
2) դիատոնիկ, էնհարմոնիկ հավասար, խրոմատիկ
3) զուգահեռ, ազգակից, համանուն
4) համանուն, դիատոնիկ, խրոմատիկ

7 **Համանուն տոնյանություններն ունեն**

1) միևնույն հնչողություն, տարբեր գրություն և տարբեր նշանակություն
2) միևնույն տոնիկաներ, միևնույն հնչյունաշարեր, տարբեր կառուցվածքներ
3) միևնույն տոնիկաներ, բանալու տարբեր նշաններ, տարբեր հնչյունաշարեր
4) բանալու միևնույն նշաններ, տարբեր տոնիկաներ, տարբեր հնչյունաշարեր

8 **Տոնայնական փոխհարաբերությունների տեսակներն են.**

1) համադրում, հակադրում, փոխադրում
2) շեղում, մոդուլյացիա (զարտուղում), համադրում
3) մոդուլյացիա (զարտուղում), շեղում, հակադրում
4) շեղում, մոդուլյացիա (զարտուղում), տրանսպոզիցիա

9 **Ինտերվալ /intervallum/ թարգմանաբար նշանակում է**

1) տարածություն
2) զուգակցություն
3) բարձրություն
4) փոխհարաբերություն

10 **Մաժորում տոնիկական եռահնչյունն ունի հետևյալ կառուցվածքը.**

1) մ.3 +մ.3
2) մ.3 + փ.3
3) փ.3 +մ.3
4) մ.3 +մծց.3

11 **Հարմոնիկ մինորում ...**

1) վերընթաց և վարընթաց շարժման ժամանակ 7-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով
2) վերընթաց շարժման ժամանակ 7-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով, վարընթաց շարժման ժամանակ՝ իջնում
3) վերընթաց և վարընթաց շարժման ժամանակ 6-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով
4) վերընթաց շարժման ժամանակ 6-րդ և 7-րդ աստիճանները բարձրանում են կես տոնով, վարընթաց շարժման ժամանակ՝ իջնում

12 **Ինչպե՞ս գրառել հնչյունի տևողությունը, եթե այն տևում է քառորդ + ութերորդական.**

1) կես նոտա
2) երկու քառորդ կետով
3) քառորդ պաուզայով
4) քառորդ կետով

13 **Դասական ֆուգաները սովորաբար ունեն**

1) երկմաս կամ եռամաս կառուցվածք
2) երկմաս կառուցվածք
3) միամաս կառուցվածք
4) քառամաս կառուցվածք

14 **Ո՞ր ձայնաստիճանը ցույց տվող ձեռքի նշանն է ցուցադրված տվյալ նկարում.**

1) սի
2) սո
3) դո
4) լա

15 **Երաժշտական ո՞ր ձևն է հիմնվում երկու հակադիր կերպարային ոլորտների վրա.**

1) սոնատային ձև
2) ռոնդո-սոնատային ձև
3) ռոնդո ձև
4) վարիացիոն ձև

16 **Այն չափերը, որոնք առաջանում են միանման պարզ չափերից, կոչվում են**

1) բարդ չափեր
2) մեջընդմիջվող չափեր
3) բարդ խառը չափեր
4) փոփոխական չափեր

17 **Պարզ երկմաս ձևը լինում է**

1) նորմատիվ և ոչ նորմատիվ
2) մոնոթեմատիկ և բազմաթեմատիկ
3) ռեպրիզայով և առանց ռեպրիզայի
4) միատոնայնական և զարտուղող

18 **Հայկական ժողովրդական երգարվեստում ինչպե՞ս է կոչվում մեծացրած սեկունդայով ձայնակարգը (լադը).**

1) դորիական
2) հարմոնիկ կամ երկակի
3) միքսոլիդիական
4) էոլական

19 **Նշել ճիշտ տողը, որտեղ առկա են հայկական ժողովրդական երգերին բնորոշ օժանդակ հենակետերը.**

1) կվարտային, սեքստային, սեպտիմային
2) սեկունդային, կվարտային, սեպտիմային
3) տերցիային, կվարտային, կվինտային
4) տերցիային, կվինտային, սեքստային

20 **Միքսոլիդիական մաժորը ո՞ր ձայնաստիճանով է տարբերվում բնական մաժորից.**

1) ցած յոթերորդ
2) ցած երկրորդ
3) բարձր չորրորդ
4) բարձր վեցերորդ

21 **Ինչո՞վ պայմանավորված չէ ժողովրդական երգարվեստում երաժշտական լեզվի ինքնատիպությունը.**

1) այլազգի երաժշտության ազդեցությամբ
2) ժողովրդի կենցաղով և պատմական իրադարձություններով
3) ազգային երաժշտական լեզվամտածողությամբ
4) ժողովրդի աշխարհայացքով

22 **Նշված երգերից ո՞րն է հեղինակել Կոմիտաս վարդապետը.**

1) Կաքավի երգը
2) Խնկի ծառ
3) Գարուն ա
4) Կանչե կռունկ

23 **Նշված ձայնակարգերից (լադերից) ո՞րը մաժոր չէ.**

1) միքսոլիդիական
2) լիդիական
3) էոլական
4) իոնական

24 **Ի՞նչ է վանկի եղանակավորումը ժողովրդական երգերում.**

1) հնչման ուժգնացումը վանկի արտաբերման ժամանակ
2) հնչման մեղմացումը վանկի արտաբերման ժամանակ
3) վանկի կտրուկ արտաբերում
4) վանկի անշտապ, ծոր տալով արտաբերում

25 **Նշվածներից ո՞րն է երաժշտական իմաստային և կառուցվածքային ամենափոքր միավորը.**

1) նախադասություն
2) պարբերություն
3) ֆրազ
4) մոտիվ

26 **Նշել ճիշտ տողը, որտեղ նշվածը մոտիվ չէ.**

1) ամֆիբրախիական
2) ինտոնացիա (ձայնելևէջ)
3) յամբ
4) քորեյ

27 **Նշվածներից ո՞րը չափակշռութային (մետրառիթմական) միավոր չէ.**

1) մոտիվ
2) հետշեշտ կամ թույլ վերջավորություն
3) շեշտ
4) նախաշեշտ

28 **Ո՞վ է հայկական ազգային բալետի հիմնադիրը.**

1) Արամ Խաչատրյան
2) Տիգրան Չուխաճյան
3) Ալեքսանդր Սպենդիարյան
4) Արմեն Տիգրանյան

29 **Ո՞վ է հայկական ազգային սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը.**

1) Արամ Խաչատրյան
2) Տիգրան Չուխաճյան
3) Ալեքսանդր Սպենդիարյան
4) Արմեն Տիգրանյան

30 **Նշված բալետներից ո՞րն է ստեղծել կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը.**

1) «Քնած գեղեցկուհին»
2) «Հավերժական կուռք»
3) «Չոփչոփիկը»
4) «Ձյունե թագուհին»

31 **Ո՞վ է Հայաստանում առաջին սիմֆոնիկ նվագախմբի ստեղծողը.**

1) Ալեքսանդր Սպենդիարյան
2) Հարո Ստեփանյան
3) Արամ Խաչատրյան
4) Տիգրան Չուխաճյան

32 **Նշված երգերից ո՞րը Սայաթ-Նովայի երգը չէ.**

1) «Քամանչա»
2) «Արի՛ ինձ անգաճ կալ, ա՛յ դիվանա սիրտ»
3) «Դուն էն գլխեն»
4) «Ես մեկ ծառ եմ ծիրանի»

33 **Նշված երգերից ո՞րը ժողովրդական երգ չէ.**

1) «Հարի հարալո»
2) «Անձրևն եկավ»
3) «Քելե, քելե»
4) «Հաբրբան»

34 **Ո՞ր տողի բոլոր երգերն են Ռոբերտ Պետրոսյանինը.**

1) «Արջամուկը», «Զանգն առաջին», «Հայաստան», «Հովիվ»
2) «Հայաստան», «Ուղիղ կարգով», «Իմ ուսուցիչ», «Աստղիկների երգը»
3) «Իմ ուսուցիչ», «Աշուն», «Զա՜ն հայրենիք», «Անձրևի երգը»
4) «Խուտուտ-մուտուտ», «Երգ մայրիկիս», «Նոր տարվա երգ-պար», «Նապաստակի երգը»

35 **Ո՞վ է հայկական ազգային առաջին օպերայի հեղինակը.**

1) Արմեն Տիգրանյան
2) Տիգրան Չուխաճյան
3) Արամ Խաչատրյան
4) Ալեքսանդր Սպենդիարյան

36 **Ո՞վ է հայկական առաջին ազգային դասական օպերայի հեղինակը.**

1) Գևորգ Արմենյան
2) Հարո Ստեփանյան
3) Արմեն Տիգրանյան
4) Ալեքսանդր Սպենդիարյան

37 **Նշվածներից ո՞րն է հայկական առաջին օպերան.**

1) Տ. Չուխաճյանի «Արշակ Բ»
2) Ա. Տիգրանյանի «Դավիթ-Բեկ»
3) Ա. Տիգրանյանի «Անուշ»
4) Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»

38 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞րն է բալետը.**

1) «Լեբլեբիջի Հոր-հոր աղա»
2) «Խորտակում»
3) «Անուրջների լիճը»
4) «Դավիթ Բեկ»

39 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞րն է Կոմիտաս վարդապետի անավարտ օպերան.**

1) «Գայանե»
2) «Խաչատուր Աբովյան»
3) «Դավիթ Բեկ»
4) «Անուշ»

40 Նշել Վիեննական դասական դպրոցի ամենաավագ կոմպոզիտորին.

1) Յ. Հայդն
2) Յ. Ս. Բախ
3) Գ. Ֆ. Հենդել
4) Լ. վան Բեթհովեն

41 Ո՞ր կոմպոզիտորն է կիրառել ձայնը և երգչախումբը սիմֆոնիայում.

1) Լ. վան Բեթհովեն
2) Յ. Ս Բախ
3) Պ. Չայկովսկի
4) Ջ. Ռոսինի

42 Բեթհովենի երկը, որի հիմքում ընկած է մարդկությանն ուղղված եղբայրության ու միասնության կոչը.

1) սիմֆոնիա թ. 5
2) սիմֆոնիա թ. 3
3) սիմֆոնիա թ. 6
4) սիմֆոնիա թ. 9

43 Սիմֆոնիա բառը հունարենից թարգմանաբար նշանակում է

1) համաձույլ
2) համաձայնություն
3) համադրություն
4) համահնչունություն

44 Ին՞չ գործիքի համար է գրված Յ. Ս. Բախի Տոկկատ և ֆուգա (ռե-մինոր) ստեղծագործությունը.

1) երգեհոն
2) ֆիսհարմոն
3) կլավեսին
4) դաշնամուր

45 **Ո՞ր նվագարանն է բնութագրում Պապիկին Պրոկոֆևի «Պետյան և գայլը» սիմֆոնիկ հեքիաթում.**

1) թավջութակ
2) կլառնետ
3) ֆագոտ
4) շեփոր

46 **Եվրոպայում ո՞ր դարում է ստեղծվել ու զարգացել կոնցերտի ժանրը.**

1) XVI - XVIIդդ
2) XV - XVIդդ
3) XVIII – XIX դդ
4) XVII - XVIIIդդ

47 **Նշել կոմպոզիտորին, ով գրել է շուրջ 500 կոնցերտ.**

1) Վ. Ա. Մոցարտ
2) Յ. Հայդն
3) Լ. Բեթհովեն
4) Ա. Վիվալդի

48 **Նշել «Կախարդական սրինգ» օպերայի գործող անձանց.**

1) Կոմամդոր, Լեպորելո, Ցերլինա
2) Էբալ, Մելիա, Զեֆիր
3) Պամինա, Տամինո, Զարաստրո
4) Կերուբինո, Բարտոլո, Ռոզինա

49 **Ինչպե՞ս է Բեթհովենը անվանել իր թ. 14 սոնատը.**

1) լուսնի սոնատ
2) լույսի սոնատ
3) սոնատ-էպիտաֆիա
4) սոնատ-ֆանտազիա

50 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.



1) Յ. Վ. Բրամս «Հունգարական պար»
2) Սվիրիդով «Ռոմանս»
3) Ֆ. Լիստ «Հունգարական ռապսոդիա»
4) Է. Գրիգ «Նորվեգական պար»

51 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.



1) Է. Գրիգ «Առավոտ»
2) Ֆ. Շոպեն «Վալս»
3) Ֆ. Շուբերտ «Երաժշտական ակնթարթ»
4) Վ. Մոցարտ «Օրորոցային»

52 **Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.**



1) Ֆ. Շոպեն Մազուրկա
2) Ֆ. Շուբերտ «Երաժշտական ակնթարթ»
3) Վ. Մոցարտ «Dies irae»
4) Է. Գրիգ «Օգեի մահը»

53 **Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.**



1) Վ. Մոցարտ «Լակրիմոզա»
2) Յ. Շտրաուս «Գարնանային ձայներ»
3) Ա. Այվազյան «Հայկական ռապսոդիա»
4) Տ. Մանսուրյան Մենուետ «Զյունե թագուհի» բալետից

54 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.



1) Յ. Վ. Բրամս «Հունգարական պար»
2) Վ. Մոցարտ «Մենուետ»
3) Ֆ. Լիստ «Հունգարական ռապսոդիա»
4) Է. Գրիգ «Նորվեգական պար»

55 Նշված երաժշտաթատերական երկերից ո՞ր երկուսը օպերաներ չեն.

1) «Խաչատուր Աբովյան»
2) «Սևան»
3) «Արշակ Բ»
4) «Ալմաստ»
5) «Անտունի»

56 Նշված երաժշտաթատերական երկերից ո՞ր երկուսը բալետներ չեն.

1) «Հավերժական կուռք»
2) «Սայաթ-Նովա»
3) «Անուրջների լիճը»
4) «Հերոսուհին»
5) «Երջանկություն»

57 **Նշված եզրույթներից ո՞ր երկուսը երաժշտության արտահայտչամիջոցներ չեն.**

1) հնչողության ուժգնություն (դինամիկա)
2) ֆրազ
3) ռիթմ
4) տեմպ
5) մոտիվ

58 **Նշել երկու տարբերակները, որտեղ կառուցված են միայն մաքուր կվարտա ինտերվալներ դեպի վեր.**

1) ռե - սոլ, մի – լա բեմոլ, լա - ռե
2) սի բեմոլ - մի բեմոլ, դո դիեզ - ֆա դիեզ, ֆա - սի բեմոլ
3) ռե - սոլ բեմոլ, սի բեմոլ - մի բեմոլ, ֆա - սի բեմոլ
4) սի - մի, ռե բեմոլ - սոլ, դո - ֆա
5) լա - ռե, մի բեմոլ – լա բեմոլ, ֆա դիեզ - սի

59 **Նշել երկու տարբերակները, որտեղ թվարկված են միայն չափավոր տեմպերը.**

1) Andantino, Allegro, Allegretto
2) Moderato, Allegro, Sostenuto
3) Andante, Moderato, Allegretto
4) Andantino, Sostenuto, Allegro
5) Sostenuto, Allegretto, Andantino

60 **Նշվածներից ո՞ր երկու շարքերում են ներկայացված միայն մելիզմները /զարդահնչյունները/.**

1) տրեմոլո, արպեջիո, ֆիգուրացիա
2) գրուպետո, մորդենտ, տրել
3) ֆորշլագ, տրեմոլո, մորդենտ
4) գրուպետո, արպեջիատո, տրիոլ
5) մորդենտ, ֆորշլագ, տրել

61 **Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու ճիշտ տարբերակները.**

1) փ.6 + մաք.1 = փ.7
2) փ.3 + փ.3 = փքց.5
3) մաք.5 + մաք.4 = մաք.8
4) մ.3 +մ.3 = մաք.5
5) մ.2 + փքց.5 = մ.6

62 **Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու սխալ տարբերակները.**

1) փքց.5- մծց.4 = մ.2
2) փ.6 – փ.3 = մաք.4
3) մաք.8 – մ.3 = փ.6
4) մծց.5 – մծց.2 = մ.3
5) մ.7 - մ.6 = մ.2

63 **Նշել երկու ճիշտ պատասխանները.**

1

2



3

4

5

1) Նիկոլայ Ռիմսկի-Կորսակով
2) Կամիլ Սեն-Սանս
3) Ֆելիքս Մենդելսոն
4) Արտուրո Տոսկանինի
5) Լեո Դելիբ

64 Նշել երկու սխալ պատասխանները.

1

2

3

4

5

1) Սպենդիարյանի անվ. օպերային թատրոն
2) Կոմիտասի թանգարան-ինստիտուտ
3) Կամերային երաժշտության տուն
4) «Առնո Բաբաջանյան» համերգասրահ
5) «Արամ Խաչատրյան» համերգասրահ

65 Նշել ռոմանտիզմին պատկանող երկու կոմպոզիտորներին.

1) Ֆ. Մենդելսոն
2) Ջ. Գերշվին
3) Ա. Վիվալդի
4) Ֆ. Շոպեն
5) Վ. Մոցարտ

66 **Համապատասխանեցնել օպերաները հեղինակներին.**

Ա) «Արշակ Բ»
Բ) «Եվգենի Օնեգին»
Գ) «Ձյունանուշ»
Դ) «Դավիթ Բեկ»

1) Պ. Չայկովսկի
2) Ա. Տիգրանյան
3) Ֆ. Շոպեն
4) Ն. Ռիմսկի-Կորսակով
5) Տ. Չուխաճյան
6) Յ. Ս. Բախ

Ա	Բ	Գ	Դ

67 **Համապատասխանեցնել երաժշտական տերմիններն իրենց սահմանումներին.**

Ա) պարբերություն
Բ) մոտիվ
Գ) կադանս
Դ) ցեզուրա

1) երաժշտական մտքի շարադրման ընթացքում առանձին իմաստ պարունակող կից կառույցների բաժանման պահը,
2) համեմատաբար ավարտուն երաժշտական միտք պարունակող ամենափոքր կառույցը:
3) երաժշտական մտքի կառուցվածքի փոքրագույն մասնիկը, որը պարունակում է մեկ շեշտ,
4) մի շեշտից մյուսն ընկած հատվածը,
5) պարբերության բաղկացուցիչ մաս,
6) երաժշտական մտքի հարմոնիկ եզրափակում,

Ա	Բ	Գ	Դ

68 **Համապատասխանեցնել երաժշտական ստեղծագործությունները հեղինակած կոմպոզիտորներին.**

Ա) «Գարնանային ձայներ» վալս
Բ) «Ռապսոդիա բլյուզի ոճով»
Գ) «Զյունանուշ» օպերա
Դ) «Մոխրոտը» բալետ

1) Ջ. Գերշվին
2) Ն. Ռիմսկի-Կորսակով
3) Պ. Չայկովսկի
4) Յ. Շտրաուս-հայր
5) Յ. Շտրաուս-որդի
6) Ս. Պրոկոֆև

Ա	Բ	Գ	Դ

69 **Համապատասխանեցնել գրական ստեղծագործությունները հեղինակներին.**

Ա) «Զոն Ուրախության»
Բ) «Դիմակահանդես»
Գ) «Քնած գեղեցկուհի»
Դ) «Ռուսլան և Լյուդմիլա»

1) Ֆ. Շիլեր
2) Լ. Ռելշտաբ
3) Մ. Լերմոնտով
4) Ա. Պուշկին
5) Վ. Մուլլեր
6) Շ. Պերո

Ա	Բ	Գ	Դ

70 **Համապատասխանեցնել օպերաները հեղինակներին.**

Ա) «Դոն Ժուան»
Բ) «Ոսկե աքաղաղը»
Գ) «Ինդիանա»
Դ) «Անուշ»

1) Ն. Տիգրանյան
2) Ա. Տիգրանյան
3) Տ. Չուխաճյան
4) Ժ. Բիզե
5) Ն. Ռիմսկի-Կորսակով
6) Վ. Մոցարտ

Ա	Բ	Գ	Դ

71 **Համապատասխանեցնել սիմֆոնիաները հեղինակած կոմպոզիտորներին.**

Ա) «Պատանեկան»
Բ) Քառասուներորդ սիմֆոնիա
Գ) Հինգերորդ սիմֆոնիան, որի թեմայի մասին հեղինակը ասել է. «Այսպես է ճակատագիրը բախում դուռը»
Դ) «Զանգով սիմֆոնիա»

1) Ա. Խաչատրյան
2) Ֆ. Մենդելսոն
3) Վ. Մոցարտ
4) Է. Միհրանյան
5) Պ. Չայկովսկի
6) Լ. Բեթհովեն

Ա	Բ	Գ	Դ

72 **Համապատասխանեցնել կոմպոզիտորները՝ ազգություններին.**

Ա) Գ. Հենդել
Բ) Ֆ. Շոպեն
Գ) Յ. Շտրաուս
Դ) Է. Գրիգ

1) նորվեգացի
2) իտալացի
3) գերմանացի
4) հունգարացի
5) լեհ
6) ավստրիացի

Ա	Բ	Գ	Դ